

ԵՐԿՐԱՄԻՆ ՏԱՐՐԸ ԿԱՄ ԱՇԽԱՐՀԻ ՆԱԽԱՆՅՈՒԹԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԱՅ ԲՆԱԳԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եթե երկրաբանական գիտությունը պատկերացնենք տարբեր ուսմունք կամ գաղափար-քարերից կերտված շենքի տեսքով, ապա հիմքը պետք է համարենք Երկրի, օգտակար հանածոների առաջացման և մի շարք այլ երկրաբանական պրոցեսների սուբստրատիվիստական տեսությունը: Սուբստրատի, իբրև ծագման հիմքի պրոբլեմը առաջ է եկել խոր հնազարում: Մինչգիտական շրջանում այդ պրոբլեմը լուծվում էր առասպելաբանական, կրոնական մականդակով. նյութական նախահիմք էր համարվում բնության մեջ առավել տարածված, մարդկանց քաջ հայտնի և կենսական նշանակություն ունեցող տարերքը՝ ջուրը: Հետագայում, շրջակա բնության զգայական-դիտողական ընկալման և էմպիրիկ մտածելակերպի հիման վրա ու նախկին մականդակով տեղի է ունենում հետևյալ փոխակերպությունը. քանի որ կենսականորեն կարևոր, ամենագոյ տարերքները մի քանիսն են և, բացի այդ, գտնվում են փոխադարձ կապի մեջ, ապա ինչու ուրեմն չհամարել, որ ծագման գործում նույնպես հանդես են գալիս միասին, «հավասարի» հիմունքներով: Այս կերպ ջրին ավելանում են հողը, օդը, կրակը: Տարերքների թիվը որոշելիս, հավանաբար, վճռական դեր են խաղացել նյութի ագրեգատային վիճակները՝ պինդ, հեղուկ և գազային, գումարած կրակը, որը նույնպես կարող էր ընկալվել իբրև նյութի վիճակ:

Մեկ նախանյութի մենաշնորհը նախնադարյան մտածելակերպի տեսակետից տրամաբանորեն արդարացվում էր: Եվ այդ եզրակացությունը հանգեցնող պատճառների շարքում կարելի է նշել ջրի ամենադորուժյան, ստեղծարար և քայքայիչ ուժի, մարդու և ողջ օրգանական աշխարհի կյանքում նրա առաջնահերթ նշանակության գիտակցումը: Հնարավոր է, որ տեղեկերական մեն-միակ նախանյութի եզակիության գաղափարի արմատավորման գործում նվազ դեր խաղացած չլինի նաև քաղաքական կյանքի հետ բնության զուգադրությունը. ամենակարող

տիրակալի միանձնյա իշխանություն հասարակության մեջ և նրա համանմանությամբ՝ ամենազոր նյութի գերիշխանություն բնության մեջ:

Տիեզերածնական պարզունակ պատկերացումներին բավարարող եզակի նախանյութի գաղափարն այնուհետև ի վիճակի չէր բացատրել անկենդան բնության հետագա փոփոխությունները: Ասենք, մինչդիտական միտքը սկզբնական շրջանում դրա կարիքը չուներ էլ, որովհետև եթե չհաշվենք ծագման գործողությունը, ապա աշխարհը թվում էր հաստատուն, անփոփոխ: Բայց ժամանակի ընթացքում մարդկային աչքը սկսում է նշմարել բնության մեջ ընթացող անդական բնույթի որոշ մեխանիկական և որակական փոփոխությունները, և միտքը ճիզեր է անում բացատրելու դրանք, ըստ որում, առաջին հերթին այն փոփոխությունները, որոնք կապված են տարերքների բայթայիշ, կործանարար ուժի՝ ջրհեղեղների, գետերի վարարումների, հրկրաշարժերի, հրաբխային ժայթքումների, փոթորիկների հետ: Այս բոլոր երևույթները դիտվում էին իբրև չորս տարերքների գործունեության արդյունք, բնդ որում նրկիրը համարվում էր այդ վայրիվերո փոփոխությունների և՛ մասնակիցը, և՛ ասպարեզը: Ուստի դժվար չէր սուրստանցիալ առումով իբրև այդ պրոցեսների հիմք ընդունել անմիջականորեն դիտվող չորս տարերքները՝ օդը, ջուրը, հողը, կրակը:

Չորս տարերքների վերաբերյալ պատկերացումների սաղմներն արդեն առկա էին երկրածնական այն հայացքներում, որ իբրև սուրստրատ հանդես էր գալիս միայն մի տարերք՝ ջուրը: Հին առասպելներից շատերում ծագման գործողությունը ներկայացվում է իբրև նրկրի և նրկների միաձուլ առկայություն ջրում և նրանց հետագա անջատում: Այսպիսով, թեև ջուրն այդ առասպելներում համարվում է «միանձնյա» երկրածին սուրստրատ, բայց նրանում արդեն ինքնուրույնարար առկա են երկու այլ տարերքներ՝ հողը և օդը: Իսկ կրակը ավելի ուշ հավելում է:

Սուրստրատի վերաբերյալ արևելյան ավանդույթը ժառանգորդաբար անցնում է հին հունական բնափիլիսոփայությանը և, բարձրանալով որակապես նոր աստիճանի, ձևավորվում իբրև ուսմունք: (Հայտնի է, որ հունական բնափիլիսոփայությունը աշխարհի առասպելաբանական ընկալումից տարրերվում էր առաջին հերթին բնության երևույթների բացատրության նկատմամբ տարերային-դիալեկտիկական մոտեցումով): Արդեն առաջին հույն բնափիլիսոփաները գրեթե ամենագլխավոր իրենց խնդիրը համարելով նախասկզբի, կամ ինչպես իրենք էին անվանում՝ արխեի խնդիրը, հանձին դրա տեսնում էին կայուն, հաստատուն էություն՝ սուրստանց, որն ապահովում է աշխարհի ողջ բազմազանությունը:

Նրանց որոնումների պտուղը դարձավ հատկությունների նյութե-
ղեն կրողը: Իր նախորդների այս առաջին փորձերի մասին խիստ ար-
ժեքավոր տեղեկություն է տալիս Արիստոտելը. «... առաջին փիլիսո-
փաների մեծ մասն ամեն ինչի սկիզբ էր համարում սոսկ նյութեղեն
սկիզբը, այսինքն այն, ինչից բաղկացած են բոլոր իրերը, ինչից՝ իբրև
նախնականից, նրանք առաջանում են և ինչի որ վեր են ածվում ոչնչա-
նալով իբրև վերջնական, ըստ որում, թեև էությունը մնում է, բայց փոխ-
վում է իր դրսևորումներով՝ դա նրանք համարում են տարր և իրերի
սկիզբ» [2, էջ 71]:

Թալեսը՝ առաջին հույն բնափիլիսոփան, որը կյանքի վերակոչեց
նախանյութի պրոբլեմը, եղակի սուբստանցի կողմնակից էր: Հայտնի է,
որ նա նախասկիզբ էր համարում «իր մեծություն մասահման» ջուրը:
Ակնհերևորեն, Թալեսի նախանյութը H_2O չէր մեր սովորական պատ-
կերացմամբ: Ինչպես Ա. Ի. Գերցենն է նկատել, «Թալեսը ամեն ինչի
սկիզբը ընդունելով ջուրը, նրանում ավելին էր տեսնում, քան այս ջու-
րը, որ հոսում է առվակներում: Նրա համար ջուրը ոչ միայն մի նյութ է,
որը տարբերվում է մյուս նյութերից՝ հողից, օդից այլև առհասարակ՝
հոսող լուծույթ, որում ամեն ինչ հալվում-լուծվում է, որից ամեն ինչ
առաջանում է. ջրում նստում է կարծրը, նրանից գոլորշիանում է թե-
թևը...»: [3, էջ 148]:

Սակայն «Թալեսի մոտ, օրինակ, դեռ չկա $\alpha\rho\chi\eta$ հասկացությունը
(որպես սկզբունք), դեռ չկա պատճառի հասկացությունը» [1, էջ 272]:
Նրա նախասկիզբը սկիզբ է ժամանակի առումով:

Այն կարծիքը կա, թե Թալեսը և առհասարակ միլետյան ողջ դպրոցն,
իրենց բնափիլիսոփայական հայացքներում հենվել են Հոմերոսի և Հե-
սիոդոսի աշխարհայացքի վրա: Հեսիոդոսի «Տիեզերքում նախ Քաոսը
ծնվեց» արտահայտության մեջ, Քաոսն արդեն հիշեցնում է նախանյու-
թը: Բայց ակնհայտ է նաև, որ «սկիզբ սկզբոցի» ուսմունքներում առկա
են շատ ավելի հին ժամանակների արձագանքները: Ինքը՝ Թալեսը ոչ
առանց հպարտության հայտարարում է, որ հռչակավոր չորս տարերք-
ները փոխարինել է մեկով:

Անաքսիմանդրոսը՝ Թալեսի աշակերտը, շատ ուրույն լուծում է
տալիս նախանյութի պրոբլեմին: Նրան չի բավարարում «զգայական
տեսանելիության հիման վրա» [4, էջ 20] արված եզրակացությունը և
նա իբրև նախասկիզբ չի ընդունում ոչ միայն ջուրը, այլև մյուս տա-
րերքները: «Ակնհերև է, որ, դիտելով, թե ինչպես են տարերքները փո-
խարկվում մեկը մյուսին, Անաքսիմանդրոսը հնարավոր չի համարել
դրանցից մեկնումեկը վերցնել իբրև հիմք, այլ ընդունել է նրանցից

տարրեր մի բան» [5, էջ 270]։ «Նրանցից տարրեր» այդ «մի բանը», ինչպես հայտնի է, Անաքսիմանդրոսի համար աղելընն էր։

Անաքսիմանդրոսի մոտ արդեն առկա են, այսպես կոչված, հակադրությունները՝ նրա կարծիքով գոյացման պատճառը ոչ թե տարրեր-ների փոփոխությունն է, այլ «անջատումը՝ հակադրությունների հա-վիտեանական շարժման շնորհիվ... Իսկ այդ հակադրություններն են տաքն ու սառը, խոնավն ու չորը և այլն» [5, էջ 271—272]։

Բոլոր տարրերների մեջ Անաքսիմանը նախապատվությունը տա-լիս է մեծությամբ անսահման, բայց հատկություններով որոշակի օդին։ Ըստ Անաքսիմանի, նոսրանալիս օդը կրակ է դառնում, խտանալիս՝ հողմ, մշուշ, ջուր, հող, քար [5, էջ 274]։ Եթե ըստ Թալեսի նրկիրը լողում է ջրում, ապա ըստ Անաքսիմանի՝ ճախրում է օդում։

Այսպիսով, առաջին հույն բնափիլիսոփաները (հոնիական դպրո-ցի ներկայացուցիչները) կողմնակից են մեկ նախահիմքի, որը փոխա-կերպվելով, ստեղծում է մնացյալ ամենը, պահպանելով իր «էությունը» (Արիստոտելի արտահայտությունը)։

Մեկ սուբստանցի դիժը շարունակում են զարգացնել նաև հետագա շրջանի հույն բնափիլիսոփաները։ Հերակլիտը նախահիմք է համա-րում կրակը («Ամեն ինչ փոխարկվում է կրակի, և կրակը՝ ամեն ինչի» [5, էջ 275]), Փսևնոֆոնը՝ հողը («Ամեն ինչ հողից է առաջացել և ի վերջո հող կդառնա» [5, էջ 293])։

Էմպեդոկլեսը խախտեց իր նախորդների ավանդույթը, ինչպես բնության ծագումը, այնպես էլ հետագա գոյացություններն ու փոփոխու-թյունները հանգեցնելով ոչ թե մեկ, այլ չորս տարրերների՝ հողի, ջրի, օդի, կրակի, կամ ինչպես ինքն էր անվանում, «բոլոր իրերի հիմքերի» գործունեությանը։ Այդ տարրերները «հավիտեանական են», այսինքն չեն փոխարկվում միմյանց, այլ փոխվում են «մեծ կամ փոքր չափերով» խառնվելիս, միանալիս կամ անջատվելիս [5, էջ 300]։

Արիստոտելը զարգացրեց չորս տարրերների վերաբերյալ էմպե-դոկլեսի ուսմունքը։ Ըստ Արիստոտելի, նախանյութը հակադիր հատ-կությունների՝ տաքի ու սառի, չորի ու խոնավի կրողն է հանդիսա-նում։ Նման մի բան նկատելի է դեռևս նրա նախորդներից շատերի մոտ, որոնց կարծիքով գոյություն ունեն նյութի հակադիր վիճակներ և դրան-ցով է պայմանավորված շրջակա բնության բազմազանությունը։ Ըստ Անաքսիմանդրոսի նախանյութի այդպիսի հակադիր հատկություններ են տաքն ու սառը, խոնավն ու չորը, ըստ Անաքսիմանի՝ խտացումն ու նոսրացումը, ըստ Հերակլիտի՝ բոցավառումն ու մարումը, ըստ էմպե-դոկլեսի՝ Սևըն ու Թշնամանքը և այլն։

Արիստոտելի չորս տարրերները ստացվում են տարբեր հատկու-

թյունների զուգակցումից, ըստ որում բացառվում են տրամագծորեն հակադիր հատկությունների զուգակցությունները (չոր-խոնավ, տաք-սառը): Հողը՝ սառի և շորի միացության արդյունք է, ջուրը՝ սառի և խոնավի, օդը՝ տաքի ու խոնավի: Հատկությունների փոխանակությունը տարերքների միջև հանգեցնում է փոխադարձ կերպափոխությունների, ասենք, խոնավությունը փոխանակելով շորության հետ ջուրը վերածվում է հողի, իսկ վերջինս սառնությունը փոխելով տաքության հետ՝ կրակի և այլն: Բնության մեջ այս սխեմայի գործողությունը կարելի է պատկերել հետևյալ օրինակով. օդը՝ տաքության և խոնավության միացությունը, սառչում է, այսինքն, տաքությունը տեղակալվում է ցրտությամբ, որի հետևանքով օդը վեր է ածվում ջրի: Չորս տարերքները, այսպես կոչված, պարզ մարմիններ են: Միանալով առաջացնում են բարդ մարմիններ՝ հանքեր, մետաղներ և այլն:

Միջնադարյան ողջ գիտությունը գտնվում էր շորս տարերքների մասին ուսմունքի ուժեղ ազդեցության ներքո: Թե որքան հիմնավոր էր այն իշխում մարդկանց մտքերին, կարելի է դատել թեկուզ հենց այն փաստով, որ միայն XVIII դարի վերջին ֆրանսիացի քիմիկոս Ա. Լավուազիեն ձեռնամուխ եղավ ապացուցելու, որ փոխադարձ կերպափոխություններ չեն կարող տեղի ունենալ: «Այն մտայնությունը, թե իբրեքնության բոլոր մարմինները բաղկացած են երեք կամ շորս տարրերից,—գրում է Ա. Լավուազիեն,—սկիզբ է առնում մի նախապաշարմունքից, որ մեզ է հասել հույն փիլիսոփաներից: Չորս տարրերի մասին այն ենթադրությունը, թե նրանք փոխադարձ համամասների տարափոխման ճանապարհով կազմում են մեզ հայտնի բոլոր մարմինները զուտ վարկած է՝ մարդկային երևակայության արգասիք...» [6, էջ 59]: Նա փորձեր է անցկացնում, որպեսզի «փարատի բոլոր կասկածները» և լուծի «հետաքրքիր մի հարց. կարո՞ղ է արդյոք ջուրը վերածվել հողի, ինչպես կարծում էին հնադարի որոշ փիլիսոփաներ և ինչպես շարունակում են կարծել ժամանակակից որոշ քիմիկոսներ» [6, էջ 47]: Ա. Լավուազիեի պատասխանը բացասական է, բայց հարցը լիովին սպառված չէ, քանի որ «մարդկային փիլիսոփայության այդ ալյուրների հեղինակությունը տակավին իրեն զգացնել է տալիս և անկասկած, կիշխի նաև գալիք սերունդների վրա» [6, էջ 59]:

Վերադառնանք, սակայն, այն ժամանակներին, երբ «մարդկային փիլիսոփայության ալյուրների հեղինակությունը» անվիճելի էր, և հետամուտ լինենք սուբստրատիվիստական հայացքների զարգացմանը հայկական միջավայրում:

Հայ բնափիլիսոփաների սուբստրատիվիստական գաղափարները ներհյուսված են իրենց ընդհանուր փիլիսոփայությանը և սովորաբար

Հանդես են գալիս իրրե օժանդակ միջոց այլ խնդիրների լուսաբանման ժամանակի Այսուհանդերձ այդ գաղափարները կարմիր թելի պես անցնում են միջնադարյան ողջ փիլիսոփայության միջով, ներկայացնելով զարգացման անընդհատ մի շղթա: Թեև զարգացում բառն այստեղ հարկ է ընդունել որոշ վերապահումով, այն թույլ է արտահայտված:

Միջնադարյան հայ բնափիլիսոփայությունը ներծծված է անտիկ գաղափարներով: Հույն մտածողների աշխատությունների մեկնիչները ջանում են այդ գաղափարները ներդաշնակել բրիստոնեական դավանանքին: Բայց լոկ այն փաստը, որ ուսումնասիրվում, մեկնաբանվում ու դրանով իսկ պրոպագանդվում էին «անաստված հեթանոսների» աշխատությունները, առաջադեմ հրեույթ էր և արժանի համապատասխան դեհաճառման:

Քննարկներ չորս տարրերի մասին պատկերացումները հայ մտածողների աշխատություններում:

Ըստ Մեսրոպ Մաշտոցի չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը, կրակը ստեղծել է աստված, որն «անսկիզբ էություն է» [7, էջ 27]: Բայց ի տարրերություն արարչի, որն «անփոփոխ է իր կատարելությամբ» [7, էջ 1], չորս տարրերն են օժտված են շոշափելի հատկություններով՝ խոնավությամբ և չորությամբ, սառնությամբ և տաքությամբ [7, էջ 28]: Մաշտոցն ընդգծում է տարրերների փոփոխական բնությունը՝ ջուրը «նեխում և նվազում է», կրակը «հանգչում է և ոչնչանում», քամին (օդը) թուլանում և ոչնչանում է: Նշվում է նաև նրանց ստեղծարար և քայքայիչ ուժը. «Կրակը ոչ միայն տաքացնում է, այլև այրում, ոչնչացնում է. ջուրը ոչ միայն սնում է հողին, այլև հեղեղում» [7, էջ 31]:

Նախանյութի վերաբերյալ Եզնիկ Կողբացու (V դար) ըմբռնումը նույնն է, ինչ և Մաշտոցինը, բայց Եզնիկը ավելի հանգամանորեն է քննարկում այդ խնդիրը: Նա ընդունում է աշխարհի նյութականությունը, ինչպես նաև ճանաչելիությունը: Սակայն, հետևելով իր ուսուցչին՝ Մաշտոցին, և բրիստոնեական աստվածաբանությանը համապատասխան աշխարհի սկզբնապատճառ, բարձրագույն սուբստանց է հայտարարում աստծուն: Նախանյութն ստեղծել է արարիչ աստվածը ոչնչելից: Ինքն աստված մշտնջենավոր է ու անսկիզբ: Եզնիկը ջանք չի խնայում ապացուցելու, որ աստված առաջնային է: Քննադատում է «երեւելի մարդկանց». ոմանց այն բանի համար, որ «կամեցան աստծու հետ գոյակից անսկիզբ մի բան ենթադրել», մյուսներին՝ որ աստծուց զատ ինչ որ նյութի՝ հյուլեի գոյությունն էին ընդունում [6, էջ 39]: «Ավելորդ է կարծել, թե աստված աշխարհն ստեղծեց ինչ որ մի հաբակից նյութից և ոչ թե ոչնչից ու անգոյից» [8, էջ 41]: Եզնիկն, այսպիսով, աստծուն համարում է առաջնային և մատերիան՝ երկրորդային, բայց

բնության մեջ նախանյութի հետագա «վարքագծի» բացատրության ժամանակ իրեն դրսևորում է իբրև մատերիալիստ:

Տարերքները ստեղծել է աստված, բայց դրանք նյութական են, որովհետև «շողափվում, զննվում, զգացվում» են մեր զգայարաններով [8, էջ 76]:

Աշխարհն ըստ Եզնիկի կազմված է չորս տարերքներից: Ըստ որում նյութական աշխարհի բազմազանությունը հանգեցնող խառնումը մեխանիկական է. օդը խառնված է ջրի ու հողի, ջուրը՝ կրակի հետ և այլն [8, էջ 140]: Յուրաքանչյուր կոնկրետ իր կազմված է որոշակի համամասնության տարերքների զուգակցումից: Բայց երբ խախտվում է հավասարակշռությունը, այսինքն՝ փոխվում են զուգակցություններն ու համամասները, ապա տեղի է ունենում իրի փոխակերպում՝ հինը ոչրնչանում է, ստեղծվում է նորը: Իրը կազմող տարերքներն, այդ դեպքում, փոփոխություն չեն կրում:

Առհասարակ Եզնիկ Կողբացին նույնացնում է տարերք և հատկություն հասկացությունները: Նրա գործածությամբ «ջուր» և «խոնավություն» բառերը հոմանիշներ են¹: Եզնիկի մոտ հիշատակություն չկա, որ տարերքներն առաջանում են հատկությունների զույգ-զույգ միացումից, հետևաբար, չի խոսում նաև տարերքների փոխակերպության մասին, որ տեղի է ունենում հատկությունների փոխանակության ճանապարհով և որը շատ պարզորոշ ձևակերպել էր Արիստոտելը:

Եզնիկը քննարկում է նախանյութի (հյուլեի) բաղադրության հարցը՝ «պարզ մարմին էր, թե բաղադրյալ»: Եթե պարզ ու միատարր լիներ, դատում է նա, ապա ինչպե՞ս կարող էր նրանից ստեղծվել աշխարհը: Չէ որ աշխարհը «կազմված է բաղադրյալ և տեսակ-տեսակ մարմիններից ու խառնուրդներից»: Ուրեմն նախանյութն իր բնությամբ բարդ մարմին է՝ կազմված տարրերից, եզրակացնում է Եզնիկը: Տարր ասելով այս դեպքում նկատի ունի հատկություն, և դա պարզ երևում է հարցադրումից. այն տարրերը, որոնցից կազմվեց նախանյութը «միմյանց հետ հաշտ էին, թե իրար հակառակ»: Պատասխանելով այս հարցին, Եզնիկը վերստին նույնացնում է նախանյութն ու նրա հատկությունները. «Տարրերը ներհակ են միմյանց, որովհետև կրակին հակառակ է ջուրը, լուսին՝ խավարը, ցրտին՝ տաքությունը, չորությունը՝ խոնավությունը» [8, էջ 44]:

Այսպիսով, եթե ըստ Արիստոտելի չորս տարերքները պարզ մարմիններ են, ապա ըստ Եզնիկի՝ բարդ: Մինչդեռ բարդ է համարում Արիստոտելը արդեն պարզ մարմինների (տարերքների) միացությունները՝ քարերը, մետաղները և այլն:

¹ Այսպիսի նույնացում հանդիպում ենք ստոյիկների մոտ [տե՛ս 5, էջ 482]:

Եզնիկը մեծ տեղ է հատկացնում հնադարյան հույն փիլիսոփաների գաղափարների քննադատությանը, դրանով իսկ ծանոթացնելով իր սեփական հայացքներին: Մերժում է այն կարծիքը, թե նախանյութը «մի ինքնագոյ բան է» և «ուշնչից չի առաջացի» [8, էջ 131]: Քննադատում է նրանց, ովքեր համարում են, որ աստված մատերիայի մեջ է եղել [8, էջ 40]: Մերժում է նաև ստոյիկների պանթեիզմը («Եսկ նյութապաշտ ստոյիկյանները, նայելով այս տեսանկի աշխարհին, ամեն ինչ՝ մարմին կարծեսին և տեսանկի աշխարհը աստված համարեցին» [8, էջ 144]) և աշխարհի նյութականությունը՝ մեն-միակ սուբստրատին հանդեսնելու փորձերը: Եզնիկի սրտովը չէ Լեկիպ-Դեմոկրիտի ատոմիստական ուսմունքը, որն իր հետագա զարգացումն էր ստացել էպիկուրի կողմից: Ըստ այդ ուսմունքի, ինչպես հայտնի է, ընդունվում էր նյութի անսահմանորեն փոքր մասնիկների (ատոմների) գոյությունը, մասնիկներ, որոնք շարժվելով տարածության մեջ, առաջացնում են տարբեր որակներ (Տիեզերքի հիմքը՝ ատոմներն են և դատարկությունը) — ասում է Դեմոկրիտը, ըստ որում «ատոմներն անթիվ — անհամար են, իսկ դատարկությունը սահման չունի» [5, էջ 326]): Հավանորեն, Եզնիկն այս ուսմունքին ծանոթացել է անմիջաբար էպիկուրյանների միջոցով, որովհետև նրա քննադատությունն ուղղված է վերջինների դեմ. «էպիկուրյանները աշխարհը համարում են լրիվ ինքնագոյ: Իբր թե նախապես փոշու մանր հատիկներ էին շարժվում՝ ինչպես որ շողը երգիկից ներս ընկնելիս նրա մեջ ինչ որ փոշեհատիկներ են երևում: Սկզբնապես, ասում են, մարմիններն այդպիսին էին՝ անտրոհելի ու անբաժանելի, որոնց թանձրացումով կազմվեց նույն այս աշխարհը» [8, էջ 144—145]: Պլատոնին քննադատում է այն բանի համար, որ նա ընդունելով «և՛ աստծուն, և՛ հյուլեն, ու իդսը» աստծուն համարում է ոչ թե էությունների, այլ ձևերի արարիչ [8, էջ 142]:

Մաշտոցի և Եզնիկի հայացքները համահունչուն են Եղիշեին, որը նյութեղեն է համարում աշխարհը, բայց ստեղծված աստծո կողմից՝ ուշնչից [9, էջ 43]: Սկզբում ստեղծվել են չորս տարերքները՝ հողը, ջուրը, օդը և կրակը: Եղիշեն հիմնավորում է հատկապես նշված տարրերի անհրաժեշտությունը. քանի որ առանց հողի չէր լինի շոշափելի խտություն, առանց ջրի՝ կապակցում, առանց օդի՝ շարժում և առանց կրակի՝ տեսանելիություն [10, էջ 232]: Սրանք «ջուկ-ջուկ են և հակառակ» բայց արարիչը հավասարակշիռ վիճակի է բերում նրանց միմյանց նկատմամբ, «սիրել է տալիս միմյանց». «կրակի ջերմությունը ճզմելով՝ մեղմացնում է օդի հովությունը, և օդի կարծր բրտությունը՝ կրակի ուժով, այնպես էլ մանրամաղ փոշիացած հողը շաղախում է ջրի

խոնավությամբ, իսկ ջրի վայր թափվող բնությունը սալահատակի նըման ամրացնում է հողի խառնուրդով» [9, էջ 43]:

Տարրերը խառնվում են. «Կրակը գոյացությամբ և զորությամբ խառնված է երեք մասերի մեջ էլ. այնպես որ ջերմությունն ավելի շատ գտնվում է քարերի և երկաթների մեջ, և ավելի քիչ՝ օդի և ջրի մեջ, բայց ինքն առանձին ոչ մի տեղ չի երևում: Իսկ ջրի բնությունն այնպես է, որ առանձին էլ կա, երեք մասերի հետ խառն էլ կա, ավելի շատ՝ հողաբույսերի մեջ և ավելի քիչ՝ օդի և կրակի մեջ: Իսկ օդը [խորքը] թափանցած գտնվում է կրակի և ջրի մեջ...» [9, էջ 43]: Հետաքրքիր է, որ Եղիշեի կարծիքով կրակն «առանձին ոչ մի տեղ չի երևում», մինչդեռ ջուրը «առանձին էլ կա, երեք մասերի հետ խառն էլ կա»: Առհասարակ Եղիշեի մոտ նկատելի է ինչ որ առանձնահատուկ մոտեցում կրակի գործունեության գնահատման հարցում: Կրակը տարբերվում է մյուս տարրերից իր ակտիվությամբ. այն «գննելի է բոլոր տարրերի մեջ» և մասնակից ամեն ինչին [9, էջ 160—161]: Եղիշեն շեշտում է տարրերի հավիտենականությունն ու անջնջելիությունը, այս հարցում կանգնելով Մաշտոցի հակառակ դիրքորոշման վրա. արարիչը «չորս նյութերի բնությունը հաստատել է անմահ» [9, էջ 160]:

Դավիթ Անհաղթը բնությունը համարում է «արարիչ՝ արարչից հետո» [11, էջ 181]: Նա ընդունում է աշխարհի նյութեղենությունը՝ «նյութը բոլոր բնական առարկաների համար ընդհանուր է» [11, էջ 140] և բազմակերպության հիմքում դնում է չորս տարրերը: Սակայն, «բնությունը ստեղծում է ոչ թե սեփական, այլ աստծու գիտությամբ» [11, էջ 157]: Դավիթն աշխատում է ապացուցել, որ գոյություն ունի «բնության արարիչ», որը զգայությամբ չի ընկալվում («գոյերից ոչ բոլորն են զգայությամբ ընկալվում»): Եվ հետո, նրա համոզմամբ չի կարելի հավատալ մեր բոլոր զգայություններին: «Ահավասիկ՝ արևը, — ասում է նա, — որը երկրից բազմապատիկ ավելի մեծ է, մենք տեսնում ենք մեկ թիզ մեծությամբ...» [11, էջ 150]:

Դավիթ Անհաղթը հատուկ սահման է գծում «տարերք» և «հատկություն» հասկացությունների միջև և, հետևելով Արիստոտելին, համարում է, որ հակադիր հատկությունները՝ ջերմությունը, ցրտությունը, խոնավությունն ու չորությունը, զուգ-զույգ միանալով, առաջացնում են տարրերներ, կամ, Արիստոտելի արտահայտությամբ, «պարզ մարմիններ», որոնք անջնջելի են. «Կրակի և ջրի սուբստրատը անապականելի է, քանի որ նրանք անորակ մարմիններ են» [11, էջ 235]: Ոչնչանալ կարող են միայն հատկանիշները, իսկ սուբստրատը հավերժական է: Օրինակ, «կրակի ջերմությունը հայտնվում և չքանում է առանց իր ենթակայի ոչնչացման» [11, էջ 234]:

Հետեւելով Եղիշեին Դավիթը նույնպէս կրակն առանձնացնում է մյուս տարերքներից: Այս միտումը բնորոշ է նաեւ հետագա դարերի հայ բնագիւղատփաների համար և սկիզբ է առնում էմպեդոկլեսից, որը մի կողմում կրակն էր դնում, մյուսում՝ հողը, ջուրը, օդը՝ իրրեւ կրակին հակադիր տարերքներու Դավիթը նշում է կրակի, այսպէս կոչված, բաժանիչ հատկութիւնը, համապատասխան մեջբերում անելով Պլատոնից. «Ասում են, թէ բաժանումը պարզեւիկ է մեղ պրոմէթէսյան հրաշալի կրակի միջոցով: Եվ պետք է գիտենալ, որ առասպելաբաններն ասում են, թէ Պրոմէթէսը ինչ-որ ժամանակ գողացաւ կրակը աստվածներից և պարզեց մարդկանց. բայց սա ալլաբանութիւնն է, որովհետեւ Պրոմէթէսը նախ և առաջ գտաւ բաժանական եղանակը, որովհետեւ բաժանական եղանակը նման է կրակի, և այդ պատճառով է, որ նրա մասին ասում են, թէ մարդկանց հուր պարզեցի: Իսկ որ բաժանողական եղանակը նման է կրակի, հայտնի է հետեւյալից. օրինակ, կրակը բաժանում է իրարից համասեւ և ալլասեւ նյութերը: Համասեւ նյութեր են, օրինակ, մետաղները՝ արծաթը, ոսկին, անագը, պղինձը, կապարը: ...Արծաթը կրակի օգնութեամբ անջատվում է ոսկուց և կապարը՝ պղնձից: Իսկ ալլասեւներ են, երբ, օրինակ, կրակի օգնութեամբ անջատում ենք ժանգը արծաթից կամ պղնձից» [11, էջ 47]: Կրակն այստեղ, ինչպէս տեսնում ենք, հանդես է գալիս ոչ թէ իրրեւ տարր, այլ գործոն: Դավիթը, սակայն, սահմանափակվում է սոսկ կրակի «բաժանիչ» հատկութիւնը հավաստելով և լռում է հակադիր՝ «միացնող» հատկութեան մասին:

Կրակի առանձնահատկութիւնն ընդգծում է նաեւ Անանիա Շիրակացին: Լինելով չորս տարերքներից մեկը, կրակը առկա է բոլոր գոյացութիւններում «չոր թէ խոնավ» [12, էջ 95, 123]: Օրինակ, երբ հողմը հարվածում է ամպին, ամպից հուր է դուրս գալիս» [12, էջ 95]: Նա համամիտ է «հեթանոս փիլիսոփաների» այն կարծիքին, որ վերին երկինքը «խտացած կրակ է», «անարատ մարմին», «պարզ կրակ» [12, էջ 68]:

Կրակն անմասն չէ երկրաշարժերի առաջացման գործում: Ու վերստին մեջբերում է անում «հեթանոս փիլիսոփաներից», որոնց կարծիքով «վերին կրակը» իր շրջապտուտի ընթացքում հողմ է առաջացնում. «հարվածում է երկրի ներքին մասին և որ տեղին հարվածում է, այնտեղ էլ առաջացնում է երկրաշարժը» [12, էջ 75]: Որքան էլ հեռու լինի այս բացատրութիւնը իրականութիւնից, իր էութեամբ մատերիալիստական է և անհամապատասխանութիւնը սուրբ գրքի տառին ստիպում է Շիրակացուն ձեւականորեն հրաժարվել դրանից: Սակայն նրա դուստր ու հանգիստ առարկութիւնը՝ «ես համաձայն չեմ դրան»,

«ես հավատում եմ Սաղմոսի գրածին» [12, էջ 75], ի տարբերություն բանավիճողի իր կրքոտ ոճի, որ հանդես է բերում անհամաձայնության դեպքում, հիմք է տալիս ասելու, որ նա հակամետ է «հեթանոս փիլիսոփաների» կարծիքին:

Շիրակացու աշխարհայացքի համաձայն նյութական սկիզբն առաջացել է «անսկզբից», իսկ «անսկիզբը մնում է աննկարագրելի և անբացատրելի»: Դա Բարձրյալն է՝ «սկիզբը և արարիչը բոլոր երևացող և իմանալի [գոյացությունների]»: Նրանից առաջին հերթին սկիզբ են առել շորս տարրերը («առաջինը՝ կրակը, երկրորդը՝ օդը, երրորդը՝ հողը, չորրորդը՝ ջուրը» [12, էջ 66]): Ողջ նյութական աշխարհը կազմված է շորս տարրերից. «երկինքն ու երկիրը և նրանց միջև գոյություն ունեցողները, Արարչի հրամանով, այս նյութերից կազմվեցին» [12, էջ 67]: Ըստ որում, Շիրակացու աստվածը ոչ միայն «սկիզբ է և արարիչ», այլև «ամեն ինչի շարժողը» [12, էջ 126]: Այս հարցում Շիրակացին համերաշխվում է Արիստոտելի հետ:

Շիրակացու մոտ հանդիպում ենք նաև տարրերի փոխարկությունների մասին անտիկ պատկերացումներին: Տարրերից յուրաքանչյուրն իր բնորոշ հատկություններն ունի («կրակի հատկությունը ջերմությունն է և շորտվածությունը, օդի հատկությունը՝ ջերմությունը և խոնավությունը, ջրի հատկությունը՝ խոնավությունը և ցրտությունը, հողի հատկությունը՝ ցրտությունը և շորտվածությունը»): Հաղորդակցվելիս տարրերը «իբար են փոխանցում իրենց հատկությունները» [12, էջ 67]:

Այնուհետև կանգ է առնում տարրերի դասավորության վրա: Ամենացածրում հողն է՝ Երկրի մարմինը, «մյուս երեք տարրերը համապատասխանաբար տեղավորված են ըստ այնմ»: Այստեղ Շիրակացին շոշափում է, այսպես կոչված, հինգերորդ նյութի հասկացությունը, որից կազմված է «ահագին վերին երկինքը»: Քննադատում է այն կարծիքը, թե այդ նյութն իր բնությամբ տարբեր է շորս տարրերից՝ «ոչ կրակ է, ոչ օդ, ոչ հող և ոչ ջուր», և որ «մի այլ տեսակի բան է՝ լուսավոր և կարծր, ինչպես բյուրեղը» [12, էջ 67]: Արիստոտելի այս մեկնաբանությունը ամենևին չի բավարարում Շիրակացուն, որովհետև իր համոզմամբ «վերին երկինքը» «անարատ մարմին է, պարզ կրակ»: Դա «հատվող, չկտրվող, չծովող, առանց խորշերի, կոկ, անկոր» մարմին է, որը չի առաջացել ոչինչից, և որից ոչինչ չի առաջացել [12, էջ 68]:

«Վերին երկինքի» տակ գտնվող երկինքը՝ հաստատությունը, կազմված է օդից և ջրից: Ըստ որում ջուրն այդ «սառած կամ թանձրությամբ խտացած չէ, այլ նման է երկրային ջրին: Եվ քանի որ այս հայացքը «հեթանոս գիտնականներինն» է, ապա Շիրակացին համաձայնելով

նրանց, իրեն ապահովագրում է վկայակոչելով սուրբ գիրքը, որը նույնպես «վկայում է այդ» [12, էջ 68—69]։

Հստ Շիրակացու, տարերքների փոխադրեցությունը է գոյատևում ու անկախ վիճակում մնում երկիրը, որը «գտնվում է մեջտեղում, օդը՝ նրա շուրջը, իսկ երկինքը շրջապատում է չորս կողմից»։ Երկիրը մնում է հավասարակշիռ վիճակում, որովհետև «իր ծանրությունը ձգտում է ներքև իջնել, իսկ հողմն իր ուժգնությունը աշխատում է նրան վեր բարձրացնել» [12, էջ 71]։ Այսպիսով երկու հակադիր ուժերի՝ Երկրի ծանրության և ցածրից փչող քամու շնորհիվ Երկիրը մնում է կանգուն վիճակում։

Ամփոփելով կարելի է ասել, որ վաղ միջնադարում, երբ ամեն մի միտք ենթարկվում էր քրիստոնեական եկեղեցու շահերին և անտիկ գիտության շատ ու շատ նվաճումներից հրաժարվելու միտումն էր գերիշխում, անշուշտ, առաջադիմական երևույթ էր չորս տարերքների վերաբերյալ անտիկ ուսմունքի վերածնունդը հայ բնափիլիսոփայության մեջ։ Ընդհանուր է, հայ մտածողները ժխտում էին նախանյութի սուբստանցիոնալ բնույթը և աշխարհի սկզբնապատճառ ու բարձրագույն սուբստանց էին համարում աստծուն, բայց ըստ խնդրի էության գրեթե լիովին համաձայն էին հնագրաի հեղինակների հետ Այսպես, ընդունվում էր տարրերի նյութականությունը, որոնք օժտված են «շոշափելի» հատկություններով։ Եթե սկզբում նույնացվում են «տարրեր» և «հատկություն» հասկացությունները (Եղնիկ), ապա հետագայում հստակորեն սահմանադատվում են այդ հասկացությունները և տարերքների առաջացումը բացատրվում է հատկությունների՝ տարության, սառնության, խոնավության և չորության, միացումով։ Տարրերները հավիտենական են, անջնջելի և միմյանց փոխարկվող։ «Հաղորդակցվելիս իրար են փոխանցում իրենց հատկությունները» (Ա. Շիրակացի)։

Այսպիսով, իբրև սուբստրատ, նախանյութ միջնադարի հայ մտածողներն ընդունում են չորս տարրերները, որոնց միախառնումից առաջացել են Երկիրը և ողջ օրգանական ու անօրգանական աշխարհը։

В. М. МАНОЯН

ГЕОГНИЧЕСКОЕ ВЕЩЕСТВО ИЛИ ПЕРВОВЕЩЕСТВО МИРА В РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ НАТУРФИЛОСОФИИ

Резюме

В эпоху раннего средневековья в условиях повсеместного абсолютного подчинения всякой мысли интересам христианской церкви, отказа от многих достижений античной науки, возрож-

дение армянской натурфилософией, в частности, античного учения о четырех стихиях, явление, бесспорно, прогрессивное. Правда, не обошлось без религиозной «приписки», так как армянские мыслители отвергали субстанциальность первовещества и первопричиной мира, высшей субстанцией провозглашали бога, но по существу проблемы они почти полностью соглашались с античными авторами. Так, признается материальность стихий, обладающих «осязаемыми свойствами». Если вначале понятия «стихия» и «свойства» идентифицируются, то в дальнейшем проводится четкое разграничение этих понятий, вследствие чего образование стихий объясняется соединениями свойств—теплоты, холода, влажности, сухости. Стихии вечны, неуничтожимы и взаимопревращаемы: из огня возникает вода, из воды—воздух и т. д.

Таким образом, за субстрат, первовещество, «материю природы» армянскими раннесредневековыми мыслителями принимаются четыре стихии, из смешения которых образовались Земля и весь органический и неорганический мир.

Կ Ի Վ Վ Ա Ն Ո Ւ Ի Տ Ո Ւ Ն

- 1 ԱճԻՆ Վ. Ի. Երկերի լիակատար ժողովածու, հ. 29, Երևան, 1981:
- 2 Аристотель. Сочинение в 3-х томах, т. I. М., 1973.
- 3 Герцен А. И. Письма об изучении природы.—Собр. соч. в 30-ти томах, т. 3. М., 1954.
- 4 Маковельский А. О. Досократики, ч. I. Казань, 1914.
- 5 Антология мировой философии, т. I, ч. I. М., 1969.
- 6 Лавуазье. Мемуары. М., 1929
- 7 Հաճախապատում Հառք: Վաղարշապատ, 1894:
- 8 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. Երևան, 1970:
- 9 Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1971:
- 10 Խաչիկյան Լ. Ս. Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը: Թեկն. դիս. (Երևանի պետական համալսարան), Երևան, 1945:
- 11 Դավիթ Աճեաղը, Երկեր, Երևան, 1980:
- 12 Աճաճիա Շիրակացի, Մատենադրություն, Երևան, 1979: